



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

17748

Վ. ՎԱՆՍԻՆՅԱՆ

# ԼՐՏԵՍ ԱՂԶԻԿԸ



ՏՊԱՐԱՆ ԵՋԱՏ

ՊԵՏՐՈՒԹ

1931

891.99

Կ-15

891.99

Կ-15

Կ. 8.

Վ. ՎԱՀԱՆՅԱՆ


# ԼՐՏԵՍ ԱՂՋԻԿԸ

2003



Տպարան ԱԶԱՏ, Պեխուր  
1931

20146



Վ. ՎԱԼԵՆՏԻՆ

ԼՐՏԵՍ ԱՂՋԻԸ



Տպարան ԱԶԱՏ, Պէյրուք  
1931



91754-42

613-2001

# ԼՐՏԵՍ ԱՂԶԻԿԸ

I

— Ես լաւ ճանաչում եմ ձեզ, ընկ. Վառուչ. բայց դուք, Երեւի չէք յիշում ինձ: Դուք դեռ գիմնադրայի աշակերտուհի՝ այն ժամանակուանիցն՝ եմ ճանաչում: Տեղն էլ ասեմ, գուցէ մտներդ գամ... Յիշում էք, մօրաքրոջս ընտանիքը, Սարգսեաններ, և ձերը՝ միևնոյն բակումն էին ապրում, «Ալեքսանդրեան» փողոցի վրայ... Յիշեցի՞ք:

— Այո՛, այո՛... չառ տարիներ անաջ... այո՛, հիմա միտս եկաք:

— Ես համարեա ամէն օր գալիս էի մօրաքրոջս տուն և տեսնում ձեզ: Շա՛տ սուս-փուսիկ աղջիկ էիք, քչախօս... հա-հա-հա: Սաստիկ ուրախ եմ, որ նորից հանդիպում ենք միմեանց՝ մեծ գործի ասպարէզի վրայ: Յեղափոխութեան գոռ ալիքները քշել՝ մեզ բերել են քով-քովի: Սաստիկ, սաստիկ ուրախ եմ... մանաւանդ որ դուք, Երեւի, կը համաձայնէք աշխատել ինձ հետ միասին: Այնպէս չէ՞:

Բաղաքի Արտակարգ Յանձնաժողովի նախագահն էր խօսողը, ընկեր Օվի Պարոնբէկեան, հազիւ երեսուն տարեկան երիտասարդ՝ եռանդուն աչքերով ու կիրթ ճակատով, առողջանութիւնը՝ կայտառ, շարժումները՝ կենդանի, զուարթ:

Դիմացը, ընդարձակ ու չքեղ գրասեղանի միւս ափին՝ ընկերուհի Վառվառէ Դալստեան, որին պարզ կոչում էին՝ ընկերուհի Վառուչ: Շուրջ 22—23 տարեկան օրիորդ՝ վտիտ, բայց բարեկազմ մարմնով: Մա-

գերը՝ բաց չադանակագոյն: Ճակատի եզերքով, մազերի տակից, անցնում էր աղուամազէ ժապաւէն: Այտերին, քթին, ծնօտին՝ ծաղկի խոշոր-խոշոր հետքեր, որոնց շնորհիւ դէմքի վարի մասը, աչքերից ներքեւ, տգեղացել էր: Աչքերն էին միայն, որ իրանց արտակարգ փայլի մէջ՝ անորոշ անուշութիւն էին պարունակում — դուրեկան, գրաւիչ, բայց և այնպէս՝ անորոշ, պղտոր:

Նոր էր քաղաքի ու երկրի իշխանութիւնը կոմունիստների ձեռքն անցել, և նոր՝ ընկեր Օվին կեցել էր գործի: Աշխոյժ, ձեռներէց ու նախանձախնդիր՝ նա ամէն ջանք ու եռանդ էր թափում, որպէս զի Յանձնաժողովի գործունէութիւնը արդիւնաւէտ լինի:

Գործի յաջող ղեկավարութեան տեսակէտից, նա իր համար սկզբունք էր դարձրել, թէ ամէն պաշտօնի ու դերի համար՝ համապատասխան մարդկանց պէտք է ընտրել: Եւ օգնականներին ու աշլեայլ ստորադրեալ պաշտօնեաներին յատուկ ընտրութեամբ էր քովն առնում: Աորհում ու ստուգում էր կանխապէս, թէ այս ինչ ընկերն արդեօք՝ իր բնաւորութեամբ ու կարողութիւններով՝ այն ինչ գործ ու դերի համար համապատասխան կը լինի թէ ոչ:

«Ամէն գործ մեքենայ է, — ասում էր ընկ. Օվին, — իսկ ամէն մեքենայի մասերը տարբեր են իրարից: Իւրաքանչիւր մաս ունի իր յատուկ տեղն ու դերը: Նոյնն են մարդիկ: Իւրաքանչիւրին եթէ իրա ընդունակութիւններին յարմար գերի մէջը տեղաւորես՝ ապա ուրեմն գործ-մեքենան կը բանի հիանալի կերպով»:

Ունէր կատարեալ ինքնավստահութիւն, թէ իրապէս ու ճշգորէն կարողանում է ճանաչել մարդկանց և այդպիսով օգտագործել նրանց՝ համապատասխան ու յարմար ուղղութիւններով:

Ընկ. Վառուչին հանդիպել էր երկու օր առաջ՝ կուսակցական պատգամաւորներին բազմամարդ ժողովում: Հեռուից հեռու նկատել, ճանաչել էր նրան, բայց այն օրը խիստ զբաղուած լինելով՝ միայն կարողացել էր բարեւել ու խնդրել, որ աղջիկն ինքը առաջիկայ օրերին՝ մի անգամ անցնէր մօտը:

Շարժուն ու պրպտուն, Օվին արագ խորհել ու վճռել էր՝ մտքի մէջ ծրարելով. —

«Սրան պիտի օգտագործեմ: Շատ յարմար կը լինի»:

Եւ ահա ընկ. Վառուչը եկել էր: — Ուրեմն, — շարունակեց ընկ. Օվին, — դուք համաձայն էք ինձ հետ աշխատելու՝ մեր գործի սահմաններում:

— Ինչու չէ... միւսնոյնն է ես հիմա գրեթէ պարապ եմ: Եւ պատրաստ եմ կատարելու ամէն գործ, որ օգտակար է մեր կուսակցութեան համար:

— Բրաւօ... ես մի կարեւոր գործ եմ նախազրծել և իմ կարծիքով՝ դուք շատ յարմար կը լինէք, որքան որ Ձեզ յիշում եմ և գիտեմ՝ այն ժամանակաւանից: Այո՛, շատ յարմար կը լինէք:

— Իսկ ի՞նչ գործ է, ընկեր Օվին:

— Կ'ասեմ, կ'ասեմ, ի հարկէ, բայց ոչ հիմա անմիջապէս, այլ... (խորհելուց յետոյ) վաղը կ'իմանաք, ընկ. Վառուչ, վաղը նորից կը տեսնուենք:

— Հիմա ուրեմն կարո՞ղ եմ գնալ. — հարցրեց աղջիկը՝ համեստ ու պատրաստակամ:

— Այո՛, անշուշտ... բայց մի քանի րոպէ ևս: (Վառուչը, որ բարձրացել էր աթոռից, նստում է կրկին): Ես կ'ուզեմայի Ձեզանից իսկ մի քանի տեղեկութիւններ ստանալ. Ձեր վերջին տարիների կեանքի մասին: Այո՞:

- Խնդրեմ... ի հարկէ:
- Օրինակ, ինձ հետաքրքրում է, թէ երբուա-  
նի՞ց գտնուում էք մեր կուսակցութեան շարքերում:
- Երրորդ տարին է:
- Նախորդ կառավարութեան օրով հալածան-  
քի ենթարկուած կա՞ք:
- Այո՛, ի հարկէ:
- Բա՞նտ:
- Այո՛, երկու անգամ:
- Իսկ նախքան կոմունիստ դառնալդ եղե՞լ էք  
ուրիշ որեէ կուսակցութեան մէջ:
- Այո՛:
- Անշուշտ, Դաշնակցականների մէջ... հա-հա-հա:
- Այո՛:
- Եւ հետագաք նրանցից, որովհետեւ զզուելի  
մարդիկ են, չէ՞... հա-հա-հա-հա՛... Եւ անշուշտ հին  
ծանօթներ շատ կ'ունենաք ձեր Դաշնակցական նախ-  
կին ընկերների մէջ... այնպէս չէ՞:
- Այո՛:
- Այդ պարագան է հէնց, որին ես մեծ կա-  
րևորութիւն եմ տալիս՝ իմ ծրագրած գործի տեսակե-  
տից: Որտե՞ղ էք ապրում դուք:
- Այգիների փողոց, թիւ 26:
- Ընկ. Օվին ձեռքի մատիտով քովի բլօկնօտի  
վրայ նշանակեց փողոցի անունն ու տան համարը: Եւ  
ասաց ապա.
- Այս գիշեր ձեր բնակարանում խուզարկու-  
թիւն կը կատարուի... Կատակ չեմ տնում: Չարմանա-  
լու իրաւունք ունէք, անշուշտ... Բայց այդ խուզար-  
կութիւնը անհրաժեշտ է՝ դարձեալ ու դարձեալ իմ  
ծրագրած գործի տեսակէտից: Եւ երբ այս գիշեր դան  
խուզարկութեան՝ դուք բնաւ չպիտի զարմանաք...

Պատրաստ եղէք: Անշուշտ, կարող է պատահել, որ ձեզ  
մօտ «գտնուեն» այնպիսի թղթեր, որոնց գոյութեան  
մասին դուք բնաւ տեղեկութիւն չէք ունեցել. սակայն,  
չատ էլ չանհանգստանաք: Աւելին պարզելու կարիք  
չեմ զգում: Հիմա արդէն կարող էք գնալ, ազատ էք,  
սիրելի ընկեր Վառուչ:

— Ցտեսութիւն:

— Ցտեսութիւն, ցտեսութիւն... Շատ զոհ եմ,  
որ գտայ ձեզ... Ցտեսութիւն:

Վառուչի հեռանալուց յետոյ, Օվին իսկոյն  
մտաւ քարտուղար Գաբրիէլ Հարունեանի սենեակը,  
որ կից էր իր կաբինէտին, և ասաց.

— Գաբո՛, գրի՛ր մի հրաման՝ օրիորդ Վառուչ  
Գալստեանի բնակարանը խուզարկելու: Իրան էլ ձեր-  
բակալել: Այս գիշերն ևեթ:

— Ինչպէ՞ս, — զարմացաւ քարտուղարը, — Վա-  
ռուչի՞ն:

— Այո՛, հէնց նրան:

— Բա՞ն ես իմացել... Հակայեղափոխական  
զաղտնի գործակա՞լ:

— Ո՛չ... եւ ես ամենևին չունեմ նրա մասին  
որեէ կասկած: Բայց և այնպէս՝ խուզարկե՛լ: Չերբա-  
կալե՛լ: Որպէս զի ապա բանտը նստեցնենք, Հէնց այս  
գիշեր:

Հարունեանը աւելի զարմացած, մտիկ արեց  
երեսին՝ հարցաբար.

— Այո՛, այո՛, — շարունակեց Օվին, — ձեր-  
բակալե՛լ, բանտարկե՛լ: Կատակ չեմ անում, սիրելիս:  
Միայն թէ. այդ ամէնը պիտի կրի ձեւական բնոյթ:  
Այսինքն, դրսի աշխարհի համար՝ մեր կուսակցական  
ընկեր Վառուչը երևան է զալու որպէս երգուեալ հա-  
կայեղափոխական, եթէ կուզես՝ Դաշնակցականների

ծպտեալ լրտես: Իսկ մեզ համար կը մնայ, ի հարկէ, անմեղ... Ընկ. Վառուչն անհրաժեշտ է, որ բանտի մէջ լինի՝ ուրիշներին լրտեսելու գաղտնի միաստիակով:

— Ա՛... — հասկացաւ Հարունեանը, բայց և, տարակուսանքը չի փարատած, հարցրեց:— Իսկ աղջիկն ինքը յա՞նձն է առել:

— Յանձն կ'առնի:

— Սակայն, վատ չէր լինի, եթէ կանխապէս նրա տրամադրութիւնը իմանայիր: Ինքը կը համաձայնի՞ արդեօք:

— Համոզուած եմ: Հակառակ դէպքում կը պարտադրենք:

— Ինչպէ՞ս:

— Կուսակցօրէ՛ն: Որովհետեւ այդ աղջիկը շատ յարմար է՝ լրտեսութեան համար:

— Կարծո՞ւմ ես:

— Ես նրան շատոնց եմ ճանաչում: Մի քանի բան պատմեմ նրա կեանքից... լսի՛ր ու ինքդ էլ կը համոզուես:

Օվին նստեց, մի գլանիկ վերցրեց քարտուղարի արծաթէ պօրտսիգարից, որ երկփեղկ՝ բաց դրուած էր սեղանի վրայ: Վառեց, ծխել սկսաւ:

— Այս աղջիկը Թիֆլիսի 2-րդ օրիորդաց գիմնազիայի աշակերտուհի էր՝ միեւնոյն դասարանում մեր Անուշի հետ միասին — մօրաքրոջն աղջիկը, որին դու անշուշտ կը յիշես: Գիմնազիայի աշակերտուհիներից մի գաղտնի միութիւն է կազմուում՝ ազգային-յեղափոխական նպատակներով: Նախաձեռնողն ու գլխաւոր գերակատարը՝ մեր Անուշն էր: Միութեան անդամուհիները ամէն կերպ զգուշանում են, որ գիմնազիայի վարչութիւնը բան չիմանայ: Սակայն, հակա-

ռակ իրանց գործադրած գաղտնապահութեան, իմանում է տեսչուհին: Խաւարամիտ ու հայտեաց մի կին... գիտե՛ս էլի, թէ ցարական շրջանում պետական դպրոցների տեսուչներն ու տեսչուհիները ի՞նչ սարսափելի զաղեր էին: Գաղտնիքը բացուում է բոլոր մանրամասնութիւններով: Տեսչուհին կատաղած, քովն է կանչում Անուշի հօրը և յայտնում՝ որ աղջիկը վըռընտելու է գիմնազիայից: Խնդիր, միջնորդութիւն, խոստումներ... և հազիւ յաջողուում է Անուշին պահել դպրոցում: Ո՞վ էր տեսչուհուն տեղեկացրել: Աշակերտուհի Վառվառէ Գալստեան՝ մեր այս Վառուչը: Իմացուում է պատահաբար, սակայն, հաստատ կերպով: Յետոյ պարզուում է նաև, որ Վառուչը մինչ այդ էլ շարունակ տեղեկութիւններ է տալիս եղել դասարանի աղջիկների մասին: Շարունակ: Եւ աղջիկները չէին կարողացել գլխի ընկնել, թէ Վառուչն է տեսչուհու գաղտնի գործակալը, այնքա՛ն վարպետութեամբ կատարելիս է լինում իր դերը: Ուրիշ օրինակներ շատ կան, սակայն, յիշածս մէկ դէպքն արդէն հերիք եմ համարում՝ աղջկայ բնաւորութիւնը սրոշելու համար:

— Ինչո՞ւ էր այդպէս անում:

— Արուեստի սիրուն, կամ թէ՛ հոգու մի առանձնաշատուկ կազմութեան շնորհիւ, կամ, եթէ կ'ուզես, սկզբունքի համար. կամ... Ինչևիցէ՝ այդպէս էր աղջիկը: Բնուետ, ի ծնէ: Ես դեռ այն ժամանակ էի եկել այդ եզրակացութեան... Եւ անա այժմ, երբ Վառուչը մեր շարքերումն է գտնուում, ես յարմար դատեցի օգտուել հանգամանքից, նրա այդ բնածին յատկութիւնը օգտագործել մեր կուսակցական շահերի տեսակէտից: Հասկացա՞ր:

— Համարեա թէ... (Հարունեանը ժպտաց):

— Դէ ուրե՞ն, գրիր հրամանը:

— Շատ լաւ, կը գրեմ: Տեսնենք ի՞նչ դուրս կուգայ քու էս օյիմպազուքիւնից:

II

Յանձնաժողովի շէնքից դուրս գալով՝ Վառուչը գնաց իրենց տուն: Դեռ նոր-նոր խառնուում էին իրար մութն ու լոյսը:

Տանը մայրն էր լինում և երկու եղբայրները՝ տասնուչորս ու տասնուամէկ տարու տղաներ:

— Էսօր էդ ի՞նչ շուտ ես եկել, աղջի,— զարմացած, առաջն ելնելով՝ հարցրեց մայրը: Յոգնաբեկ, տանջուած, հիւանդոտ մի կին:

Գուլպաներ էր կարկատում այդ միջոցին ու մի-աժամանակ հետեւում ինքնահոռին, որ եռալուն մօտ՝ տղազում էր աղմկալից: Իրաւունք ունէր զարմանալու: Աղջիկը սովորութիւն էր արել՝ գիշերները ուշ տունն դառնալ: Առաւօտները կանուխ դուրս գնալով, է՛լ չէր երևայ ամբողջ օրը: Ճաշելու համար իսկ սակաւ յետ կը գար: Մայրը յաճախ հետաքրքրուել, դըժգոհել էր ու յանդիմանել... Ախր ինչո՞ւ ժամանակին տուն չի գալիս:

Երկաթուղային «Ազիտ-Պրօպ»ի գրողարան-ընթերցարանն էին յանձնել իրան: Ստանում էր չնչին ոտճիկ և օրեկան պարենը՝ հաց, շաքար, իւղ, բրինձ, (իրա բաժինը):

Գրողարանից դուրս՝ կուսակցական հաւաքոյթ, միտինգ, դասախօսութիւն... Կ'երթար ամէն տեղ ու ամէն ազատ ժամին, որպէս զի լեցնի օրը՝ մինչև որ գիշերը խորանար ու է՛լ արդէն՝ տունն գնալու ժամանակը հասնէր:

Որպէս կուսակցական գործիչ՝ առանձնապէս աչքի չէր ընկնում: Համեստ, չարքաչ, ամէն տեսակ սև աշխատանքի պատրաստ: Եւ ընկերները, առիթից օգտուելով, յաճախ բեռնում էին:

— Ախր, ա՛յ աղջի,— քանի՛ քանի անգամ կշտամբել, հարցրել էր մայրը,— դո՞ւ որտեղից՝ էս բոլշեւիկներին մէջն ընկար: Ինչո՞ւ դառար բոլշեւիկ, որ էսպէս աշխատում ես, չարչարում:

... Այս անգամին, թէև սովորականից շուտ է տուն դարձել, չի կամենում երկար մնալ արթուն: Սկըսում է յօրանջել:

— Գլո՞ւխդ է ցաւում, աղջի:

— Չէ՛:

— Բա խի՞ ես առչկոտում: Աչքով են տուել:

— Է՛հ, մայրիկ... քսուս է տանում: Պառկեմ պիտի:

Եւ անկողինը սարքելով, հանուեց ու պառկեց, որ քնի:

Սակայն, քունն ուշացաւ: Ժամեր անցան, և աղջկայ քնքերը դեռ բաց էին կեցել: Մտքերը չէին թողնում հանգիստ: Թէ՛ «արդեօք ի՞նչ գործ է տալու ընկ. Օվին: Իսկապէ՞ս կարեոր գործ է լինելու»... Մտածում էր, մտածում...

Եւ ուշ գիշերին դրսի դուռը թակեցին: Այնքան ուժգին, անխնայ կերպով էին վերհատում, որ մայրիկը զարթնած՝ ընդոստ ելաւ անկողնից:

— Ի՞նչ է... ո՞վ է... դուռը ծեծում են... Ի՞նչ է պատահել:

Եկել էին խուզարկութեան: Տասնից աւելի չեկիստներ ներս թափուելով՝ սկսեցին պրպտել, տակնուվրայ անել տան իրերը:

Վառուչը սկզբում շփոթւեց, որովհետև մոռա-

ցել էր իսպառ՝ ընկ. Օվիի ասածը, թէ իրանց տունը, թերևս, խուզարկութեան ենթարկուի: Յետոյ յիշեց այդ և հանգստացաւ: Է՛հ, խուզարկում են՝ թո՛ղ խուզարկեն...

Մայրը սակայն, սրտաճաք՝ գլուխը կորցրած շարունակ զարկում էր ծնկներին: Սարսափելի եղաւ նրա դրութիւնը մանաւանդ, երբ խուզարկութիւնը վերջանալուց յետոյ՝ յայտարարեցին. —

— Օրիորդ Գալստեան, դուք ձերբակալուած էք: Տանը, Վառուչի ներքնարկի տակին, «գտնուեցին» հակայեղափոխական թռուցիկներ, կասկածելի նամակներ:

Իւ լոյսը դեռ չբացուած, Վառուչին տարան:

\* \* \*

Առաւօտը, ժամը տասի մօտերքը, ընկ. Օվին եկաւ: Իր կարինէտը բերել տւեց ձերբակալուած աղջկան:

Աւելի իրական, անտարակուսելի դարձնելու համար զիշերուան խուզարկութեան արդիւնքները, նա սկսեց՝ չէկիստների ու զինուորների ներկայութեանը՝ նախատել Վառուչին անխնայ խիստ խօսքերով:

— Դուք, ուրեմն, եղել էք ոչ թէ կոմունիստ, այլ մի ստոր վարձկան: Դաշնակցական բանդաների կողմից կաշառուած լրտես: Ստորութիւն: Կեղտոտ նպատակներ... Սակայն, յեղափոխական Նէմէզիդան, արթուն ու աշաւորջ, պատուէ՛լ է ձեր զիմակը և շուտով իր վճիռը կը տայ՝ ձեր գործած սրիկայութիւնների համար:

Եւ այդ նախատինքներից յետոյ, կարգադրեց, որ ձերբակալուածը մենակ թողնուի կարինէտում,

իրա հետ միասին, պատճառաբանելով, թէ նրան պիտի առանձին էլ հարցաքննի:

Երբ բոլորը հեռացան՝ մնացին երկուսով, ընկ. Օվին՝ դէն զնելով շինծու վրդովմունքը, մօտեցաւ՝ ձեռքն աղջկայ ուսին դրեց բարեկամաբար:

— Անմեղ մեղաւոր եղաք, սիրելի ընկ. Վառուչ: Եւ ես անկեղծօրէն պիտի ներողութիւն խնդրեմ ձեզ պատճառածս նեղութիւնների համար: Բայց այս ամբողջ կատակերգութիւնը անհրաժեշտ էր՝ իմ ծրագրի իրագործման տեսակէտից... Յամենայն դէպս վատ չէ՞ք ազդուել: Ընչո՞ն ասացէք:

— Ո՛չ... (բայց դէմքին մտահոգութիւն և տարակուսանք էր նկատուում): Երևի, հարկաւոր էր այսպէս... գործի շահի համար:

— Այո՛, այո՛... և այժմ արդէն կարող եմ ձեզ բացատրել: Նստեցէք, ընկ. Վառուչ:

Աղջիկը նստեց:

— Խնդրի էութիւնը հետեւեալն է: Այսուհետեւ դուք բոլորի համար՝ մի կաշառուած հակայեղափոխական էք: Միայն ես ու ընկ. Գարօն պիտի զիտենանք իսկութիւնը: Ձեզ կը տանեն ուղիղ՝ բանտը: Կը մնաք այնտեղ...

— Բայց ինչո՞ւ: (Վառուչը գունատեց): Ա՛յո էլ կատակերգութիւն:

— Մի վախենաք, սիրելիս: Իսկոյն կ'իմանաք նպատակս: (Գլանիկ վառեց, ծխեց): Թշնամին զարկելու և յաղթելու լաւագոյն միջոցն է՝ ճիշդ տեղեկութիւններ ունենալ նրա ծրագիրների և նրա ուժերի մասին: Այս միջոցը գործադրել են բոլոր լաւագոյն զօրավարները: Մեր մղած կուսակցական պայքարն էլ մի կատարեալ պատերազմ է, ի հարկէ: Ուստի մենք էլ

պիտի գործադրենք յիշեալ միջոցը: Այսինքն՝ պիտի շարունակ տեղեակ լինենք մեր թշնամու ծրագրներին: Այդ նպատակով է, որ ունենք յատուկ հետախուզական խմբեր: Բայց դրանք գլխաւորաբար դրսի համար են, այսինքն ուղում եմ ասել նրանք գործում են բանտերից դուրս: Մինչ դեռ անհրաժեշտ է, որ բանտերի մէջն ևս հետախուզութիւններ կատարուեն... այսինքն պարզն ասելով, — լրտեսութիւն:

Եւ ընկ. Օվին մանրամասն բացատրեց բանտային լրտեսութեան կարեւորութիւնը: Ճիշդ է, այժմ էլ բանտի մէջ կան յատուկ լրտեսներ: Բայց և այնպէս, իր կարծիքով, նրանք չեն կարողանայ կատարել ա՛յն, ինչ որ հեշտութեամբ կը կատարի Վառուչը:

— Այժմ եզրափակեմ ասածներս: Դուք բանտ կ'երթաք իբրև դիմակաղերձ Դաշնակցական: Ներկայումս ունենք այնտեղ շուրջ եօթնասուսուս Դաշնակցական՝ տղամարդ թէ կին: Մօտ օրերին էլ, հաւանական է, էլի մի տասը-քսան հոգի կ'աւելանան՝ կարեւորներէ: Դուք մէջները կը մտնէք, կը բարեկամանաք կամաց-կամաց, որպէս զի յետոյ գլուխները թափ տաք... Այդ ձևով հեշտութեամբ կարող կը լինէք զանազան գաղտնիքներ քաշել բերաններէ: Մէկին-միւսին-կրորդին՝ հետզհետէ խօսեցրէք, գրգռէք... և մի քաշուէք՝ որքան կարողանաք հայհոյեցէք կոմունիստներին: Դէ, այժմ հասկացա՞ք. սիրելի ընկ. Վառուչ, ամէ՞նը հասկացաք:

— Այո՛:

Լաութիւն տիրեց:

— Բայց ինչի՞ մասին էք մտածում, ընկ. Վառուչ: Արդեօք դժուա՞ր գործ եմ յանձնարարում ձեզ:

— Ո՛չ, ոչ... դժուար չի... ինչո՞ւ պիտի զրժ-

ւար լինի:

— Ուրեմն համաձայն էք:

— Այո՛, այո՛:

— Շատ ուրախ եմ, որ այդպէս է: Եւ ես միանգամայն համոզուած եմ, որ մեր երկուսիս նախաձեռնած գործը յաջողութեամբ կը պսակւի: Համոզուած եմ: Որովհետև ձեր կարողութիւնների մասին՝ ես շատ մեծ վստահութիւն ունեմ: Եւ որովհետև, առհասարակ կարողանում եմ ճշգորէն ճանաչել մարդկանց: Եւ դուք չէ, որ պիտի չարագոյնէք յոյսերս:

Ձանազան ցուցմունքներ ու խորհուրդներ տալուց յետոյ, ընկ. Օվին վերջացրեց:

— Դէ՛ այժմ յաջողութիւն եմ մաղթում ձեզ: Շարունակ նորանոր հրահանգներ կը ստանաք ինձանից: Բոլոր հարկաւոր դէպքերում՝ դուք ինքներդ կարող էք զիմել ինձ՝ բանտապետի միջոցով — ընկ. Գուրգէնը: Ես կը կարգադրեմ որ ձեզ հնարաւորութիւն տրուի՝ օգտուելու թուղթ-մատիտից: Կարող կը լինէք ժամանակ-ժամանակ մտնել ընկ. Գուրգէնի սենեակը: Այսօր կամ վաղը, մինչև առաւօտ, հրահանգների մի առանձին ցուցակ կուղարկեմ, նրանով կ'առաջնորդուէք: Առայժմ այսքան: Յտեսութիւն:

Ձանգահարեց: Մի չեկիստ մտաւ ներս...

— Սրան տարէք թիւ 2 կամէրան — պատւիրեց ընկ. Օվին՝ նորէն խստացնելով դէմքը:

Ձայնը կոշտ էր, անհամբոյր:

### III

Չէկայի (Արտակարգ Յանձնաժողով) բանտում եօթնասուսուսի չափ կալանաւորներ կային, բոլորն էլ մեղադրուած թէ՛ ձգտել են դաւադրել Սորհրդային իշխանութեան դէմ: Դատ ու վճիռ դեռ չէին արել նը-

բանց վերաբերմամբ:

Բանտի շէնքը — նախկին դպրոց — յարմարութիւններ քիչ ունէր: Երեք ընդհանուր կամէրաներ էին տրամադրելի, որոնցից մինը կանանց համար: Կային ապա առանձին-առանձին խցիկներ, թուով տասներջորս:

Վառուչին ազմուկով բերին՝ կանանց բաժանմունքը նետեցին:

Կալանաւորուհիներից շատերը ճանաչեցին նրան անմիջապէս: Եւ զարմացան, հետաքրքրուած՝ սկսեցին հարցեր տալ, քովը խոնուելով:

Բայց յանկարծ կամերայում բնադդային թերահաւատութիւն ծագեց և բոլոր կալանաւորուհիները կասկածելով՝ կորցրին ամէն վստահութիւն ու միմեանց յետեից քաշեցին մէկդի: Լոկեցին և նշաններով ու փափրսուկով հասկացրին իրար, թէ հարկաւոր է զգոյշ լինել այդ նորեկից:

Մինչև իրիկուն բանտարկեալներին ոչ մէկն այլ ևս չմտեցաւ, չխօսեց Վառուչի հետը:

Տղամարդկանց կամէրաները կից էին կանանց կամէրային և զոյգ մեծ դռներով ել և մուտ ունէին իրար մէջ: Կալանաւոր տղամարդիկն էլ իմացան աղջըկայ՝ բանտում յայտնուելու մասին: Եւ երբ մթնեց, իրանց մէջ սկսեցին ակնարկներ անել նրա հասցէին՝ դիտմամբ այնքան բարձր ձայնով, որ նա լսի...

— Փառնազգեստ գայլ է համեցէք արել: Կարծո՞ւմ է՝ յիմարներ ենք, կը հաւատանք, — ասաց մէկը:

— Մի ժամանակ մեր շարքերումն էր... հա-հա-հա... Յետոյ՝ «պահարգան» տւեց, — նկատեց երկրորդը:

— Հա-հա-հա... հո-հո-հո-հո, — ծիծաղում էին

այս ու այն կողմերից:

Վառուչը պարզ ու սուր կերպով զգաց այդ ընդհանուր խորշանքը: Ու վհատեց: Հասկացաւ, որ դժուար պիտի լինի՝ թշնամօրէն իրա դէմ համերաշխած այդ բազմութեան մէջ ի կատար ածել գործը, որ յանձն էր առել:

Եւ քանի որ ոչ ոք այլևս չէր խօսում հետը, ինքն էլ լռեց:

Լուռութեան մէջ, որին քունը յաջորդեց շատ ուշ ժամին, գիշերն անցաւ:

Առաւօտեան, թէյից յետոյ, լուռեց հրամանը.

— Վառուչ Գալստեան, դուրս եկէք: Չէկայի նախազանի մօս:

Հնազանդ, տարտամ, մտազբաղ՝ հետեց հրամանին ու գնաց, ներկայացաւ:

Օվի Պարոնբէկեանը մենակ էր իր կաբլինէտում: Նայեց զուարթօրէն, բարևեց՝ ձեռքը բարեկամաբար թօթուելով:

— Հը՞, նեղուեցի՞ք, ընկ. Վառուչ... հա-հա-հա... Բայց ձեզ համար բանտային նեղութիւնները շատ էլ ծանր չպիտի երևան, քանի որ փորձել էք արդէն: Ես էլ երեք անգամ բանտ եմ նստել, գիտէ՞ք: Երկու անգամ ցարական ըէժիմի օրով, մի անգամ էլ Դաշնակցական մաուզէրիտների տիրապետութեան ժամանակ: Առաջին անգամին նեղուեցի, նոյնիսկ հիւանդացայ լուրջ կերպով: Բայց երկրորդ անգամին այնքան արդէն վարժուել էի, որ բանտում նստելը խաղ ու պար եղաւ ինձ համար: Երեւակայեցէք, բանտի մէջ մեծ քանակութեամբ գրքեր կարդացի, այնքան՝ որքան չէի կարդացել ազատութեանս բոլոր տարիներում... Ուստի, անհոգ կացէք, սիրելի ընկ. Վառուչ: Սկիզբն է, հետգետէ կը վարժուէք: Ես հա-

613-2001



մողուած եմ կատարելապէս, որ անագին գործ պիտի կատարէք... Դէ՛, այժմ դո՛ւք խօսէք, — յարեց՝ նրկատելով, որ Վառուչը շատ լուռ է մնում. — պատմէք, տեսնեմ: Ի՞նչ արիք-չարիք այս մէկ օրուան ընթացքում: Որի՞ հետ կարողացաք մօտենալ մի քիչ... Դէ՞:

Ծխում էր այդ միջոցին. և գլուխը յետ քցելով բազկաթոռի մէջքին՝ թանձր ծուխ արձակեց դէպի առաստաղը, փորձելով՝ որ ծուխն օղակ-օղակ վեր բարձրանայ:

— Ես լսում եմ, ընկ. Վառուչ: Պատմէք:

— Ի՞նչ պատմեմ:

— Ինչ որ գիտէք: Ինչ որ գիտեի էք:

— Դեռ ոչինչ... Առաջին օրն է: Դեռ հարկաւոր է գոնէ երեք-չորս օր... մէկ շաբաթ... աւելի:

— Ի հարկէ, ի հարկէ: Բայց և այնպէս, հետաքրքրական է ինձ համար, թէ արդեօք ի՞նչ է ձեր անհատական տպաւորութիւնը: Այսինքն՝ բանտի մթնոլորտում ինչպէ՞ս թւաց ձեզ իմ յանձնարարած գործը: Հեշտութեամբ գլուխ կը հանէք, այնպէս չէ՞:

— Դեռ... չգիտեմ, ընկեր Օվի: Առաջին անգամից դժուար է հաստատ բան ստել:

— Այո՛, այո՛, դուք իրաւացի էք, — համաձայնեց իվերջոյ Պարոնբէգեանը, — և ես ձեզ այսօր կանչեցի մօտս՝ երկու բանի համար: Առաջինը՝ անա՛, ես թըղթի եմ անցկացրել մի շարք ցուցմունքներ, ինչպէս արդէն երէկ խոստացել էի ձեզ: Պահէք ձեր մօտ և շարունակ նկատի առէք: Եւ երկրորդ, ձեր ուշադրութիւնն եմ դարձնում յատկապէս Աննա Դարբինեանի վրայ, որ Դաշնակցականների թագաւորութեան ժամանակ գաւառական կոմիսարի կին է եղել: Ես տեղեկութիւն եմ ստացել, որ նրա մօտ շատ կարեւոր դադա-

նիքներ կան: Միջանասակ, չէկ մազերով մի կին է, արդէն նկատած կը լինէք, երեւի: Այո՞:

— Դեռ չէ... բայց կը նկատեմ... կ'աշխատեմ բոլորին նկատել... կը փորձեմ:

— Անշուշտ... Ինչ եւ իցէ, այդ չէկի հետ առանձնապէս բարեկամացէք:

Եւ կրկին ու կրկին ծուխ արձակեց դէպի առաստաղը օղակ-օղակ:

Հոռութիւն: Վառուչը, կարծես ընդարմացած, ոչ խօսում էր, ոչ էլ իսկ մտիկ տուրխ նախագահի սաձներին:

— Ահա՛ ամէնը, սիրելի ընկեր Վառուչ: Այժմ կարող էք երթալ Յտեսութիւն:

Երեք-չորս օր մենք այլեւս չենք տեսնուելու: Որովհետեւ այսօր պիտի Երեւան ձանապարհուեմ. Ժողով ունենք: Ուրեմն, առայժմ մնաք բարով: Եթէ իմ բացակայութեան ընթացքում որեւէ կարեւոր բան պատահի՝ կը զիմէք ընկեր Գարոյին, որ իմ փոխանորդըն է լինելու: Ինչպէս արդէն ձեզ ասել եմ երէկ, Գաբօն լիովին տեղեակ է խնդրին... Մի՛ յուսահատուէք: Վստահ ու քաջ պիտի լինեմ:

Վառուչի կանչուելը նախագահի մօտ՝ խօսակըցութեան նիւթ դարձաւ կալանաւորների շրջանում: Կամէրաներն իրար անցան, տղամարդ ու կին՝ խընուեցին միտոին:

— Ընկերներ՛ր, — ասաց չիկահեր Դարբինեան Աննան՝ կարգադրական, պարտաւորիչ եղանակով. — ո՛չ մի բառ՝ այդ անպիտանի հետ: Ամէն մի անգոյշ խօսք՝ մեր կողմից, ամէն մի անմտած քայլ՝ նրա ձեռքում կարող է գործիք դառնալ՝ հէնց մեր դէմ:

...Եւ երբ Վառուչը վերադարձաւ՝ բացարձակ լուռ թեան ու պաղ արհամարհանքի հանդիպեց:

Մի քիչ անց, ինքը փորձեց խօսել:

— Դուրսը բաւական լաւ եղանակ էր:

Բայց նրա խօսքերը անհետաւանարձագանք կորսուեցին համատարած լուսթեան մէջ:

Էլի՛ մի քիչ յետոյ՝ կրկնեց փորձը.

— Գիշերը երազիս մէջ՝ ձիաների մի մեծ երամակ տեսայ... սպիտակ, սեւ, ոսկեգոյն ձիաներ... — և շփոթուելով՝ հասկացաւ իսկոյն, որ ասածը յիմարութիւն է, ու ակամայից հազաց:

Ի պատասխան, մի հազ տրձագանդեց՝ տղամարդկանց կամէրայի դրան յետեւից. եւ ահա՛ բոլոր բանտարկեալները, այր ու կին, խօսք մէկ արածի պէտ՝ հազացին, հա՛ հազացին... Կամէրաները լցուեցին աղմկալից հազով, յանկարծական համաճարակի նման... ասես մէկը՝ հազացնող փոշի էր շաղ տուել ամենուրեք:

Շփոթուեց ազլիկը: Եւ ուզեց ծիծաղել... Ա՛խ որքան զուարճալի էր տեսարանը, չէ՞... Ճիշտն է՛ զարմանք ու զուարճանք երեւցնել իր աչքերին մէջ, շըրթունքների վրայ:

Մտածում էր շարունակ: Եւ որոշեց. — այս օրն էլ անցնի, առաւօտ կանուխ նամակ կը գրի ընկեր Գարոյին...

Բովանդակութիւնը նամակի շարագրեց մըտքում:

«Ես վաղուց տկար եմ եղել և հիմա զգում եմ, որ բանտի պայմանները առողջութեանս վրայ աւելի վատ են ազդելու: Այդ պատճառով խնդրում եմ, որ ինձանից վերցնէք ներքին լրտեսութեան աշխատանքը: Խնդրում եմ... թէ չէ հիւանդութիւնս կը ծանրանայ: Ես առհասարակ վատառողջ ազլիկ եմ. չեմ զիմանայ:

Մտքի մէջ շարադրուած նամակը կրկնեց այնքան՝ սր գոց արեց ամբողջովին:

Թ՛ող այս օրն ու գիշերն էլ անցնեն: Էզուց առաւօտ կանուխ նամակը կը գրի ու կտանի՝ ընկեր Գարոյին կտայ:

IV

Սակայն վառուչին տիրեց այնպիսի անձկութիւն, որ այլեւս անկարելի դարձաւ սպասել՝ օրը մթնէր, գիշերն անցնէր, առաւօտը լուսանար:

Եւ ժամը վեցի մօտերքը, երբ կալանաւորուհիները դուրս էին հանում բակը, իրիկուան զրօսանքի, վառուչն էլ նրանց հետ — կամէրայից ելնելիս — մօտեցաւ բանտապետին, որ մէկդի կեցած հսկում էր:

— Կարեւոր գործ ունեմ, — ասաց այնքան բարձր, որ բոլոր միւսներն էլ պիտի անշուշտ լսէին: (Է՛ թող լսեն, իրան այլեւս ինչ՝ փոյթ): Թողէք ձեր գրասենեակը մտնեմ:

— Ի՞նչ գործ, — հարցրեց բանտապետը՝ գոռոզաբար ու անհամբոյր (պէ՛տք է ձեւանար):

— Նամակ պիտի գրեմ ընկ. Օվիին:

— Գնացել է Երեւան:

— Ուրեմն, ընկ. Գարոյին: Անհրաժեշտ է:

Միասին մտան բանտի գրասենեակը:

— Հօ՛ւհօ՛ւհօ՛... — նրա յեաւելից ծիծաղեցին կալանաւորուհիները:

— Մեր թախթերի տակին դժոխային մեքենաներ է գտել՝ լո՛ւրն է տանում... հա-հա-հա՛:

— Լրտես, լրտես...

Իսկ յետոյ, երբ բակն ելան, շիկահեր Գարոյինեան Աննան կարգադրեց.

— Երբ որ յետ կը գոյ կամէրան, ամէնքս ծափերով դիմաւորենք: Ես էլ շնորհակալական ուղերձ կը կարգամ:

Վառուչը, գրասենեակը մտնելիս, լսեց այն բացականչութիւնները (լրտե՛ս, լրտե՛ս), բայց էլ ինչ նշանակութիւն: Թո՛ղ ասեն, ինչ կամենան: Նրանց ամէնքի համար պարզել էր լրտեսական իր հանգամանքը, որ այլեւս ոչնչով չի կարելի քողարկել: Իրա համար էլ ա՛յն է պարզ հաստատօրէն, որ այս իրիկունը հէնց՝ ինքը հրաժարուած կը լինի լրտեսի դերից:

— Ի՞նչ նամակ էք ուղում գրել, ընկ. Վառուչ, հարցրեց բանտապետը՝ հեգնական ժպտով (ինչպէ՛ս չը հեգներ, քանի որ դիմացինը ծաղրի առարկայ էր դարձած բանտարկեալների շրջանում):

— Պիտի գրեմ... — պատասխանեց աղջիկը՝ նեարդային շէտով, — պիտի գրեմ, որ այլեւս բանտի մէջ մնալ չեմ ուղում:

Եւ հապճեպ նստեց, գրեթէ նետուելով գրասենեակին առաջ: Սկսեց գրել: Մէկ շնչով, ինքն իրա դէմ դրդուած, տարօրինակ մոլուցքի մէջ, թղթի տուեց լրիւ բովանդակութիւնը նամակի, որ շարադրել էր մտքում:

Բանտապետը, միշտ միեւնոյն հեգնանքը հայեացքի մէջ, հանդարտօրէն կեցել էր քիչ անդին, ձեռքերը կողերին դէմ տուած:

— Խնդրեմ, մի ծրար տուէք... Վերջացրի: Այս նամակը պիտի հէնց այժմ...

Գուրբը աղմուկ բարձրացաւ: Փողոցի կողմից բանտի երկաթաշէն դարպասն էին թակում շտապ ու հրամայաբար: Պահպանները, հերթապահ հսկիչն ու բարապանը իրար անցան...

Բանտապետը դուրս աճապարեց: Գրած-վերջա-

ցրած նամակը ձեռքին՝ Վառուչը կեցաւ սեղանի առաջ, սպասողական վիճակի մէջ:

Ընկ. Գարօն ներս մտաւ: Ոտքից գլուխ փոշոտացիտտ ու թրջուած, բայց խրոխտ ու զուարթ: Յաղթական բաւականութեամբ լեցուն՝ աչքերն ու կուրծքը: Աջ ձեռքին մաուզէր ատրճանակը՝ պատրաստ:

Նրա ետեւից մտան ուրիշները, նոյնպէս փոշոտ ու յուզուած, ատրճանակներով, և նրանց մէջ մէկը՝ անդէն, գլուխը բաց, դաստակները պինդ իրար պըրկուած:

Սենեակը վայրկենապէս լեցուեց քայլերի աղմուկով, եկուորների բացահանչութիւններով:

— Այստեղ կանգնեցրէք, — պատուիրեց ընկ. Գարօն, ձախ ձեռքին պահած մտրակը մեկնելով դէպի սենեակի կենտրոնը, որ մի ընդարձակ տարածութիւն էր:

Այդ ասելիս շրջուեց՝ կոնակով դէպի այն սեղանը, ուր Վառուչն էր կեցած:

— Այստեղ, հէնց այստեղ կանգնեցրէք:

Առաջ բերին, կանգնեցրին սենեակի մէջտեղում՝ գլխաբաց, անդէն մարդուն:

... — Երուանդը, — շնչաց Վառուչը ու լայնլայն բացեց աչքերը: Ծանաչեց:

V

Երիտասարդ էր, հազիւ 23-25 տարեկան, շատ գեղեցիկ դէմքով, մէջքն ուղիղ ու ժայռուտ: Արձանի պէս, հպարտ ու հանդիսաւոր, կեցաւ՝ ուր կանգնեցրին իրան: Հայեացքը ուժեղ, հանդարտ ու վստահ:

Սենեակի առաստաղի կենտրոնում փակցուած խոշոր էլէքտրական լամպարից, որ վառել էին նոր, առատ ու պայծառ վար հոսող լոյսը ողողել էր նրան ամբողջովին:

— Հը՛... — մի քիչ մօտ գալով, դարձաւ նը-

րան ընկ. Գարօն.— նպատակիդ չհասա՞ր, յարգելի պարօն Դաշնակցական տէնօրիստ: Խելքդ ո՞ւր էր հապա. կարծում էիր՝ քնած ենք մենք: Հաշիւդ սըխալ ես բռնել: Ամէն մէկս հազար աչք ունենք ու տասը հազար ականջ: Ո՛չ ոք չի կարող մեզ խաբել: Դու դեռ սահմանը չանցած՝ տղերքս արդէն հոտ էին առել որ գալու ես: Բարո՛վ եկար, հազա՛ր բարով: Մեր գըլխի, մեր աչքի վրայ տեղ ունես: Ա՛յ հիմա կարող ես արդէն միսսիադ կատարել. ես ահա այստեղ, առաջիկ կանգնած, դէ՛ ինձ տէնօրի ենթարկիր, տեսնեմ՝ ո՞նց ես անելու... հա-հա-հա: Ինչ՞ու ես պապանձուել, յարգելի «ընկեր» հերոս: Խօսիր, նորութիւններ պատմիր՝ արտասահմանիցն ես գալիս:

Նորէն ծիծաղեց հեգնոտ: Միւսներն էլ ձայնակըցեցին և սենեակը թնդաց ծիծաղից:

Վառուչը (չիմացաւ՝ Գարօն, ներս գալու միջոցին, իրան նկատել էր թէ ոչ), սեղանի մօտից հեռացած՝ քաշուել էր մէկդի ու անչլուկ, շուռը հաւաք, մտիկ էր տալիս:

«Այո՛, այո՛, նա ինքն է: Երուանդը, Երուանդը: Ա՛խ, Տէր Աստուած»...

— Հը՞, պարօն «պարսկահպատակ Նիշաբուրեան Աֆթանդիլ».— շարունակեց Գարօն՝ այդ աղղանունը կարդալով թղթի երեսից, որ ծոցի գրպանում դրած՝ այժմ հանեց դուրս:

— Հօ-հօ-հօ՛, «Աֆթանդիլ»... «Նիշաբուրեան»... հեգնեցին այս-այն կողմից,— ի՞նչ էլ տուր-տուր անուններ է ջոկել... Իբր ոչ ոք չկարենայ կասկածել, թէ սարքովի են, կեղծ պասպօրտ է...

— Այստեղ քեզ լաւ ճանաչողներ կան մեր տղերանց միջից: Դու՛ թիֆլիզի պօլիտեխնիկումի նախկին ուսանող Փամկոչեանն ես: Երուանդ Փամկոչեան՝

— հանդիսաւոր կերպով յայտարարեց ընկ. Գարօն.— Այնպէս չէ՞, պարօն «Նիշաբուրեան»: «Համադանցի՛»:

— Այո՛, այդպէս է,— պատասխանեց երիտասարդը,— իրաւ, դա կեղծ անցագիր է: Ինքս եմ՝ Երուանդ Փամկոչեանը:

— Եւ Դաշնակցական... այնպէս չէ՞:

— Այո՛, ես Դաշնակցական եմ:

— Եւ գաղտնի անցել ես Թաւրիզից՝ ձեր բերօրոյի հրահանգներով... այնպէս չէ՞:

— Այդ մասին ոչ մի բացատրութիւն չէք ստանայ:

— Հը՞:

— Ոչ մի:

— Իսկապէ՞ս... ո՞չ մի հատիկ բացատրութիւն... հա՞...— մի քանի անգամ կրկնեց Գարօն՝ աւելի ու աւելի արհամարհոտ, աւելի մօտենալով նրան:

Երիտասարդը, սակայն, լռած՝ հայեացքը դարձրել, ուրիշ կողմն էր նայում: Էլէքտրական խոշոր լամպարի պայծառ ու սուտ լոյսի տակին կեցել էր հպարտ, անսասան:

Գարօն գրգռուեց...

— Շան տղայ,— գոռաց,— այդ ֆատններդ քե՛զ պահի: Ու հիմա կը տեսնես, թէ ինչ է նշանակում չենթարկուել մեր հրամաններին... Տղե՛րք,— դիմեց ապա շուրջը խոնուած իր զինւորներին,— սրամէջքը առաջ-առաջ լաւ թնփ տալ է հարկաւոր: Մըտրակի կապէք այս փախստական լրբին, որ հասկանայ թէ կեղծ անցագիրն ինչ բան է...

Հարուածների կարկուտ տեղաց Փամկոչեանի կռնակին, ուսերին: Հինգ-վեց տղայ, խամ կաշուէ հիւսկէն մտրակները եռանգով վեր ձօճեցրին՝ անողորմաբար սկսեցին զարկել...

— էլի՛ էլի... տուէ՛ք... հը՛... — խրախուսում էր ընկ. Գարօն՝ զայրագին:

Կալանաւորը մնաց իր նախկին զիրքի մէջ, պայծառ լոյսով ողողուած: Միայն բազուկներն ու ուսերըն էին ցնցւում ցաւից և զէմքը՝ հողի գոյն ստանում:

Զինուորները աւելի տաքացած, ոգևորուած, շարունակեցին զարկել ու զարկել...

— Աա՛խ... — յանկարծ հնչեց մի ճիչ՝ սուր, սարսափահար, աղաչական:

Վառուչն էր: Գունա՛տ-գունատ՝ իր նախկին տեղում կանգնած...

Ընկ. Գարօն յետ նայեց, զարմացաւ:

— Դո՛ւք էք, ընկ. Վառուչ, պա՛հ. ի՞նչ գործ ունէք այստեղ, հը՞:

Ազջիկը կարկամեց: Առաջին ճիչը ակամայ էր թոցրել կրծքից:

Զարկող զինուորները, նոյնպէս զարմացած, գազարեցրին իրանց գործը, պատրաստ՝ վերսկսելու անմիջապէս:

Գարօն նեարդայնացաւ.

— Դէ, խօսէք, իմանամ, ինչի՞ համար էք եկել... Հը՞:

Վառուչը, շարունակ գունատ, որքան կարողացաւ հաւաքեց ինքզինքը.

— Զեզ հետ ուզում էի խօսել... բայց չգիտէի, որ զբաղուած էք... ներողութիւն... ես հիմա կ'երթամ...

Եւ ձեռքերը մէկէն քունքերին հպելով (սուր ցաւ զգացած մարդու պէս), փութկոտ քայլերով դուրս ելաւ:

Երբ վերադարձաւ կամէրան, նկատեց, որ կա-

լանաւորուհիների մէջ յուզմունք էր տիրում: Հազիւ զրօսանքի ելած, նրանք յետ էին դարձուել կամէրան՝ շտապ, անսպասելի կերպով: Այդպէս էր կարգադրել ընկ. Գարօն՝ բանտն եկած միջոցին:

Իրարանցումի, խռովքի մէջն էին ամէնքը: Յուզմունքի խուլ արձագանդներ էին լսում հարեան կամէրից, որի դռները պինդ գոցել էին:

Քանտապետի օգնականը դադտնաբար կապ ունէր բանտարկեալների հետ, տեղեկութիւններ էր հասցնում: Եւ շտապել էր հաղորդել ժամկոչեանի ձերբակալութեան մասին. թէ՛ հեռագրուած է Երևան, որ նախագահը վերադառնայ անյապաղ. թէ՛ Գարօնի հրամանով՝ թիւ 6 կամէրայի մէջն են փակելու ժամկոչեանին — կամէրաներից ամենավառն ու չարագուշակը: Թիւ 6-ը անխուսափելի գնդակահարութեան խորհրդանշանն էր:

Ոչ ոք ուշադրութիւն չդարձրեց Վառուչի վրայ: Նրան հեղնական ծափերով դիմաւորելու հրահանգը, որ շիկահեր Գարբինեանն էր տուել, մոռացուեց իսպառ: Բոլորն էլ այժմ ուրիշ հոգս ու մտքեր ունէին: Ժամկոչեանի ձերբակալութիւնը ճնշող ազդեցութիւն էր առել:

Հուռ-մունջ Վառուչը նստեց իր թախտին և մի գլանիկ վառեց: Ծխելու շատ էլ սովոր չէր, ուստի երբ ծուխը հաւաքուում էր կոկորդում՝ ինքը հազիւ էր կարողանում դիմանալ անհաճոյ խտիղին... Եւ չքերը լցւում էին արցունքով և ճիգ անելուց՝ երեսն էր ծրմռում: Բայց ծուխը խորունկ ներս քաշելու պահանջ զգաց այդ միջոցին:

Եւ մտածում էր, մտածում: Մինչև որ ժամերն անցան և նա ի վերջոյ պիտի քուն մտնէր, թէպէտ կ'ուզենար դեռ էլի՛ մնալ զարթուն և էլի՛ մտածել: Քուն մտնելու վայրկեաններին, աչքերը բացխփելիս,

ձեռքը ժաքէթի գրպանում՝ մի թուղթ շօշափեց: Նամակն էր, որ պիտի տար ընկ. Գարոյին:

Սակայն, այլևս կարիք ու իմաստ չունէր այդ նամակը: Վառուչը վճռել է՝ դեռ մնալ բանտի մէջ: Մնալ... այո՛. այո՛: Այդպէս է վճռել՝ այնքան երկար մտածելուց յետոյ:

Ընկեր Յվին ասել է մի քանի անգամ — «Չըյուսահատուէք, ընկ. Կառուչ»: Անչո՞ւշտ, ինչո՞ւ յուսահատուել: Առանց այլևս յուսահատուելու, ինքն այստե՛սեռ կը շարունակի մնալ բանտում:

Աչքերը բացուխուփ էին լինում աճող քնի ճնշումից: Մտքերն էլ գնում էին գալիս՝ ննջել սկսած ուղեղի մէջ... Եւ ժամկոչեան Երուանդի ճակատը, աչքերը, բազուկներն երևացին...

Չայնն էլ հնչեց ականջին՝ խրոխտ, հպարտ ձայնը:

«Ոչ մի: Ոչ մի բացատրութիւն»:

Յետոյ, երբ ննջել էր — կէս քուն, կէս արթուն — նրա՛ն տեսաւ աչքի, մտքի առաջ, երազի մէջ ու իրական՝ պայծառ բոցերով շրջանակուած, ինքն էլ պայծառ ու գեղեցիկ—

Երուանդ ժամկոչեանը:

Վառուչը գիտէր նրան՝ պատանի տարիներից:

Միրել էր նրան: Նրա աչքերի կարօտն է քաշել: Բայց տղան մնացել էր անտարբեր:

Տարիներ անցան: Դէպքեր եկան ու անցան: Կեանքի վրայով փոթորիկներ պայթեցին ու անցան: Կարօտը, սակայն, չանցաւ Վառուչի սրտի միջից:

Երուանդը չէր երևում այլևս: Ով գիտէր՝ ո՛ւր էր գնացել: Ոչ թէ միայն մարդիկ, այլ լեռներ ու երկիրներ, տեղներից շարժուած, ցրիւ էին եկել աշխարհի տարածութեան վրայ...

Կարօտը, սակայն, մնացել էր իր տեղում՝ ազդեալ սրտի մէջ: Եւ յաճախ, կրակի պէս էր վառուել այդ կարօտը: Եւ այնքա՛ն ջերմ տենչանք էր լինում՝ Երուանդի գեղեցիկ դուլը գրկելու, խոչոր սև աչքերը համբուրելու:

Միտինգներին, «Ազիտ-պրօպ»ում, ժողովներում, ամենուր՝ կարօտը մնաց ու մնաց:

Եւ ահա Երուանդն ինքը՝ իրա խոչոր սև աչքերով...

Մշուշ էր իջել Վառուչի գլխին, մտքերը մթնացրել: Ու կարելի չէր լինում հասկանալ, թէ ինչպէ՞ս է կատարուել այս ամէնը:

\*  
\*  
\*

Չարթնեց Վառուչը գիշերուան կարճատև, անհանդիստ քնից: Կամէբայում, առաւօտեան լոյսը դեռ լրիւ չէր, հեռու անկիւնների մէջ կիտախաւարն էր տիրում:

Արագօրէն սթափուած, սուր հետաքրքրութեամբ աչքի տակից պրպտուն նայեց դէպի հարևան կամէբայում, որի դուռը, այս անգամ, բաց էին արել սովորականից աւելի լայն:

Անձկութեամբ Երուանդին որոնեց: Մի գուցէ, իր քնած պահուն, նրան բերել են այնտեղ:

Յետոյ, մէկի-միւսի երեսներին սևեռեց իր հայեացքը, որպէս զի իմանար՝ բերե՞լ են իսկապէս թէ ոչ: Բայց ամէնն էլ խուսափեցին նրա աչքերից՝ միւլենոյն յամառութեամբ ու արհամարհանքով:

Նորից եկան գիշերուան մտքերն ու կարօտը. և նրանց հետ միասին՝ լոյսերով ողողուն Երուանդ ժամկոչեանը: Շարունակ գալիս, կանգնում էր մտքերի կենտրոնում — գեղեցիկ, հանդիսաւոր:

Առաւօտեան թէյն ու հացը բերին: Վառուչը հրաժարուեց, որովհետեւ իսպառ ախորժակ չունէր:

Միայն ծխում էր անդադար:

Եւ կամեցաւ ցաւատանջ—

«Փրկե՛մ Երուանդին: Մնամ բանտի մէջ ու փրկե՛մ»:

VI

Կէսօրին մօտիկ, Երևանից օթօմօքիլով վերադարձաւ ընկ. Օվին: Ճանապարհուել էր մթնով, հեռագիրը ժամկոչեանի ձերբակալման մասին ստանալուն պէս:

Շատ և շատ գոհ էր:

— Սա՛ մեծ յաջողութիւն է, ընկեր Գարօ: Եւ ես չափազանց ուրախ եմ: Ծնորհակալութի՛ւն, շնորհակալութի՛ւն... Եւ լաւ արիւր, որ հեռագրեցիր՝ եկայ: Հիմա մենք երկուսով միասին՝ աւելի մեծ եռանդով կը շարունակենք սկսուած գործը:

— Էլ ի՞նչ «շարունակել», — նուրը հեգնանքով նկատեց քարտուղարը. — գործը և՛ սկսուել է և՛ արդէն վերջացել: Ժամկոչեանը ներկայումս մեր ձեռքումն է — ահա գործի նախաբանն էլ, վերջարանն էլ: Եւ իմ կարծիքով, այժմ հարկաւոր է միայն՝ տաք տաք ձեռքերով երկաթը:

— Այսի՛նքն:

— Անյապաղ մի ձեւական դատ. ու ժամկոչեանի հոգոցը կարգանք, թէկուզ հէնց այս գիշեր:

— Բայց ես կարիք չեմ տեսնում այդքան վազելու: Թո՛ղ մի քանի օր «հիւր» լինի մեզ մօտ: Չի կարողանայ հօ փախչել:

— Շատ էլ լաւատես չպիտի լինել: Յետաձգելու անհրաժեշտութիւն ընաւ չկայ: Ընդհակառակը:

Դու չես ճանաչում, իսկ ես շատ լաւ իմանում եմ, թէ ի՛նչ ճարպիկ շանորդին է ժամկոչեանը: Բռնատու եթէ պահուի առժամանակ, հեշտութեամբ կապ կը հաստատի միւս կալանավորների հետ: Ահագին հեղինակութիւն է վայելում... Չէ՛, չէ՛, հէնց այս գիշեր: Ինչո՞ւ աւելորդ գլխացւանք ստեղծենք ինքներս մեզ համար: Վերջացնե՛նք:

— Այնուամենայնիւ, պնդեց նախագահը, — ես այն տեսակէտի վրայ եմ կանգնած, որ սպասենք երկու-երեք օր: Ենթադրում եմ, որ կարելի կը լինի որոշ գ զանիքներ կորզել նրանից:

— Ո՞ւմ միջոցաւ, — հեգնեց Գարօն, — նախագահի յամառութիւնից արդէն զրգոտած, ու դժգոհ. — Չլինի՛ քո այն վառուչովն ես ուզում նպատակիդ հասնել:

— Թէկուզ հէնց: Ի՞նչ կայ որ:

— Ա՛հ, — վրդովուեց քարտուղարը, — ձեռք քաշիր այդ յիմար աղջկանից, իսէր Ալլահի: Երբ սկզբում ասում էի քեզ, թէ զո՛ւր է, դու կարեւորութիւն չը տուիր իմ կարծիքին: Գէ հիմա, խնդրեմ կանչիր բանտապետին ու հետաքրքրուիր... Հեգնանքի, ծաղրի առարկայ է դարձել բոլորի աչքում: Ուրեմն, հարկաւոր է անմիջապէս դուրս հանել բանտից:

— Իմ կարծիքով, դու սխալում ես, Գարօ: Սիրում ես վառ-վառ եզրակացութիւններ անես: Դեռ ես սպասիր, ընկ. Վառուչը մեզ պէտք կը գայ:

— Բայց ի՞նչ արդիւնք է տուել մինչև այժմ:

— Ա՛յ մարդ, հրաշքնե՞ր ես ուզում: Հալիւ երկու օր...

— Եւ այնքա՛ն անշնորհք դուրս եկաւ, որ այդ կարճ ժամանակում բոլորին իմացրել է արդէն, թէ ո՛վ է ինքը: Այո՛, այո՛: Առանց քաշուելու, բան-

տարկեալներն ուղիղ երեսին՝ լրտես են անուանում...  
 Բանտապետից հարցրու, ինքդ անձամբ ստուգիր, որ  
 համոզուես: Խայտառակութիւն է կատարելապէս. և  
 ուրիշ անգամ է՛լ չենք կարողանայ մեր մարդկանց ու-  
 դարկել ներս, այդ աղջիկը միանգամայն վարկարեկեց  
 ներքին լրտեսութեան սկզբունքը: Ես անհատապէս  
 բացարձակ հակառակ եմ, որ դրան պահենք այսուհետև:  
 Եւ ամէն պատասխանատուութիւն ձգում եմ վրայիցս:  
 Եթէ կայ մէկ ուրիշը, շնորհքովը՝ բե՛ր, օգտագործենք:

Սյրապէս ձեռք քաշիր այդ ապիկարից: Անգոյն  
 մի արարած ոչ գլխումը խելք է երեւում, ոչ էլ ինքն  
 է, գոնէ իբրև կին, ներկայացնում որեէ հետաքրքրու-  
 թիւն: Կուրծքը տափակ, ներս ընկած, ուսերը քաշ...  
 վերջապէս, — մտաբերելով աւելցրեց Գաբօն, — վա-  
 ուուչն ինքը այլևս չի ուզում այդ գործը շարունակել:  
 — Խօսե՛լ ես հետը:

— Ո՛չ: Բայց բանտապետին է ասել՝ երէկ գի-  
 շեր:

Ընկ. Օվին մտածեց:

— Լաւ, կարող եմ հէնց հիմա կանչել, պարզել  
 խնդիրը: Իսկ ինչ վերաբերում է Ժամկոչեանին, ճա-  
 շից յետոյ աւելի մանրամասն կը խօսենք: Հիմա,  
 ճիշդն ասած, գիշերուան անքնութիւնից ու ճամբից  
 յետոյ՝ մէկ-երկու ժամ հանգստանալու կարիք եմ ըզ-  
 գում:

\*  
 \*\*

Իրենց կամէրայից դուրս գալով, աղջիկը կանգ  
 առաւ միջանցքում, որի միւս կողմին, ընդհանուր կա-  
 մէրաներին զուգահեռ ուղղութեամբ, առանձին-առան-  
 ձին խուցերն էին դասաւորուած: Դռների ճակատին  
 թուերն էին նշանակուած: Վառուչը որոնեց «թիւ 6»ը...  
 Իրանց կամէրայում, մտածմունքի միջոցին, իր լսո-

ղութեանը հասած հատուկոր անորոշ խօսքերից են-  
 թաղրել էր ու ապա համոզուել ընտղգորէն, սր Ժամ-  
 կոչեանին թիւ 6-ը տարած պիտի լինեն:

Շատ որոնեց այդ թիւը: Հայեացքի մէջ՝ հեւք  
 ու սուր փափաք:

— Շո՛ւտ արէք, — շտապեցրեց, սակայն, բան-  
 տապետը, որ ընկ. Օվին կարգադրութեամբ յետևիցն  
 էր եկել, — նախագահը վաղ կանչել է:

Վառուչը վարանոտ քայլերով, սրտի մէջ ճըն-  
 շող անձկութիւն, մտաւ նախագահի սենեակը:

— Ա՛, ընկ Վառուչ... բարե՛ւ ձեզ, բարե՛ւ:  
 Ես միայն մի հինգ րոպէով կանչեցի ձեզ, խօսելիք  
 ունեմ... Նստեցէք, խնդրեմ: Ահա այդ աթոռին:

Վերաբերմունքը զուսպ էր, աւելի պաշտօնական,  
 մի քիչ պաղ: Եւ Վառուչը զգաց: Շտապեց խօսել. —  
 Ես արդէն սկսել եմ, ընկ. Օվին... և այժմ  
 տեսնում եմ, որ կարելի է բաւական գործ կատարել...  
 պատրաստ եմ շարունակել, աշխատել:

— Շատ ուրախ եմ, ի հարկէ: Միայն թէ ա-  
 սէք, տեսնեմ, ի՞նչ էք արել:

— Ես... սկսել եմ բարեկամական կապեր հաս-  
 տատել: Եւ եթէ գոնէ մէկ շաբաթ էլ այսպէս շարու-  
 նակեմ, ընկ. Օվին, կարող կը լինեմ շատ բաներ, շատ  
 գաղտնիքներ իմանալ:

— Ամբողջ շաբաթներ ձեր տրամադրութեան  
 տակ կարող են լինել, ընկ. Վառուչ: Սակայն, ինձ շատ  
 է հետաքրքրում, թէ ի՞նչ է կատարուել մինչև հիմա:

— Դեռ վերջնականապէս որոշ բան չկայ, ընկ.  
 Օվին. չէ՞ որ...:

— Գիտեմ, գիտեմ, անշուշտ, — ընդհատեց նը-  
 րան նախագահը, — մի քանի օրուան մէջ հրաշքներ  
 չէիք կարենայ գործել: Բայց և այնպէս, ի՞նչ էք ա-

րել: Կամ, ի՞նչ էք մտադիր անել: Որքա՛ն որ տեղեկացայ այսօր, դուք, սիրելի ընկ. Վառուչ, չէք կարողացել պահպանել ձեր, այսպէս ասած, ինկողնիտօն: Կամէրայում արդէն շատերն իմացել են, թէ ո՛վ էք դուք: Ճի՞շդ է արդեօք:

— Այո՛, այո՛, — վրայ բերեց Վառուչը՝ առանց տատանուելու, — մի անպիտան կնիկ հասկացել է... Եւ գիտէ՞ք, ընկ. Օվի, ամենից լաւն այն կը լինի, որ ինձ փոխադրէք մի ուրիշ կամէրա: Ես արդէն որոշ փորձառութիւն ձեռք բերի այս մի քանի օրում... Փոխադրէք, փոխադրէք ինձ:

— Ուրիշ ընդհանուր կամէրա այլևս չունենք...

— Բայց միթէ չի՞ կարելի՞ առանձին կամէրաները:

— Քա՛ւ լիցի: Առանձին կամէրաներում նախ յատուկ մարդ չենք կարող դնել՝ բանտարկեալի կողքին. և երկրորդ, — յղպիսի բարդ և պատասխանատու գործի համար՝ դուք դեռ ևս պատրաստ չէք... Ի՞նչ և նախագահը յօրանջեց, քունն էր տանում, ձանձրացել էր:

— Արդէն բաւական փորձուել եմ, ընկ. Օվի, հաւատացնում եմ ձեզ, — ասաց Վառուչը, յախուռն, փութկոտ ձայնով՝ կարծես վերջին յոյսն էր, որ պիտի դուրս թռչէր, կորչէր. — դուք ինձ փոխադրէք մի առանձին կամէրա... ես արդէն գիտեմ, թէ ո՛րն է յարմարը... Փոխադրէ՛ք, ընկեր Օվի, և կը տեսնէք, կը տեսնէք թէ՛ ես...

— Լա՛ւ, լաւ... առայժմ ցտեսութիւն: Այսօր կամ վաղը մենք էլի առիթ կունենանք խօսելու: Այժմ ես յոգնած եմ սաստիկ:

— Ո՞ր ժամին դամ այսօր:

— Ինքս իմաց կը տամ:

\* \* \*

Մինչև որ կը մթնէր՝ ժամերը Վառուչի համար օրերի երկարութիւնն առան: Նրա նեարդերի մէջ մտած անհամբերութիւնը աճել էր սաստկօրէն:

Թիւ 6-ն ու միջի կալանաւորը դուրս չէին գալիս մաքից: Եւ դրանց հետ զուգընթաց, Վառուչին խորապէս զբաղեցնում էր՝ առանձին կամէրաների մէջ լրտեսութիւն անելու իր ծրագիրը, որի մասին կէսօրից առաջ յայտնել էր նախագահին:

Այո՛, այո՛, պէտք էր իրագործել այդ ծրագիրը: Այնքա՛ն սքանչելի էր Երուանդը՝ բանտապետի սենեակի մէջտեղում հպարտօրէն կանգնած: Անդո՛ւթ հարուածների տարափի տակ՝ հերոսի պէս, անսասան ժայռի պէս կացաւ... գեղեցի՛կ էր ինչքան:

Եւ էլ չկարողանալով սպասել, թէ երբ ընկեր Օվին դարձեալ կը կանչի իրան, ինքը շտապեց խնդրել բանտապետի միջոցով թէ շատ կարևոր ասելիք ունի, անհրաժեշտ է տեսնուել...

Ընկ. Օվին տհաճութեամբ լսեց բանտապետի հազորգած խնդիրը: Փարտուղարն էլ մօտն էր այդ միջոցին ու իւր լեցրեց կրակի վրայ, թէ՛

— Համը հանեց այդ զգուելին: Գլխներիս ուղղակի խաթա՛ գարծաւ:

Նախագահը համաձայնեց ընդունել, բայց շատ դժկամօրէն: Եւ Վառուչի մանելու միջոցին, ահամայից յօնքերը հաւաքեց ու անհամբոյր տոնով, գրեթէ զրգուած, առանց բարեկիտ կանխապէս, հարցրեց.

— Ի՞նչ էք կամենում, ընկեր Վառուչ:

— Բարև ձեզ... ինձ ներեցէք, որ անհանգիստ եմ անում: Բայց ստիպուած էի... որովհետև շատ անհրաժեշտ գործ ունեմ:

Ընկ. Գարօն, գրասեղանի քով, նախագահի զիմացը նստած, հեղնօրէն թափ տուեց զլուխը ու ցուցական կերպով վեր կացաւ տեղից.

— Ես չեմ խանգարի ձեր «անհրաժեշտ» գործը: Ասաց ու իր սենեակն անցաւ:

— Դէ՛, ի՞նչ ունիք ասելու... — նորէն հարցըրեց ընկ. Օվին, — անհամբերութեամբ ձեռքն առնելով գրիչը՝ ի նշան, որ ինքը աւելորդ մամանակ չունի:

Վառուչը, առանց չփոթի ու վարանքի, դասը լաւ սերտած աշակերտուհու վստահութեամբ՝ սկսեց.

— Իմ հաւաքած տեղեկութիւններով, բանտարկըւած Գաշնակցականներից մէկի մօտ պահուած են իրանց կուսակցութեան ամենակարեւոր գաղտնիքները: Եւ ես արդէն կատարել եմ բոլոր նախապարտատական աշխատանքները... Իսկ այսուհետեւ հարկաւոր է միայն լաւ մօտենալ այդ մէկին: Եւ առ բաներ կ'իմանամ, գաղտնիքներ կը կորզեմ... Այո՛, ընկ. Օվին, դուք միանգամայն ճիշդ կերպով հասկացել էք, որ ես յարմար եմ այդպիսի գործերի՝ համար: Նմանապէս, ճիշդ է, այո՛, որ ասում էիք ինձ, թէ թշնամուն զարկելու և յաղթելու համար լաւագոյն միջոցն այն է, որ մենք հաստատ տեղեկութիւններ ունենանք նրա նպատակների և ուժերի մասին... անպէս չէ՞:

— Իհարկէ... — մի քիչ մեղմացաւ նախագահը — շատ լաւ էլ մտքներումդ պահել էք իմ ասած խօսքերը: Սակայն, նախ՝ հետաքրքրական է, թէ որի՞ն էք դուք նկատի առել: Գիտէ՞ք ձեր այդ Գաշնակցականի ազգանունը:

— Ի հարկէ, ամէն ինչ մանրամասնաբար իմացել եմ:

— Ո՞րն է, ո՞վ է:

— Ժամկոչեան Երուանդ, Թիֆլիսի պոլիտեխ-

նիկումի նախկին ուսանող...

— Պա՛հ... դոչեց ընկ. Օվին՝ հեղնօրէն-զուարճեղանակով և յետ շարժուեց՝ կոնակը նետեց բազկաթոռի մէջքին, — ա՛յ թէ դտել էք:

— Անշուշտ, անշուշտ... — չհասկացաւ Վառուչը՝ այդ խօսքերի բուն իմաստը: Եստ էր տարուել՝ իր ծրագիր-նպատակին հասնելու բուն փափաքով: Եւ շարունակեց. — Ժամկոչեան Երուանդը շատ պատասխանատու գործիչ է: Ուստի, ես պատրաստ եմ նրան լրտեսելու...

— Աւելորդ է, ընկ. Վառուչ: Նախ՝ նա «թիւ 6» յատուկ կամէրայումն է, որ կը նշանակի թէ՛ միանգամայն անկարելի է ձեզ անդաւորել հետը միասին: Եւ յետոյ, մենք արդէն այդ ժամկոչեանի մասին ամէնը գիտենք, ինչ որ պէտք էր գիտնալ: Այլևս ոչ մի կարիք չկայ նրանով յատկապէս զբաղեցնելու ձեզ կամ մէկ ուրիշին: Հարցը միանգամայն պարզ է մեզ համար և վճիռը՝ յայտնի:

— Վը... ճի՞ ո... — կմկմաց Վառուչը:

Սիրտը, կարծես, պաղեց մի վայրկեան:

— Այո՛, վճիռը՝ արդէն տրուած վերջացած:

Փուլ եկան Վառուչի բոլոր ծրագրերը, սենյանքը, կամքն ու նեարդերը: Հասկացաւ ինչ էր լինելու վճիռը, ու լուեց, զլուխը կրծքին կախ ընկաւ:

Նրա գնալուց յետոյ, ընկ. Օվին ներս կանչեց քարտուղարին:

— Դրո՛ւստ որ յիմար ազջիկ է եղել: Իմ երթող-բողոքիւնն ու սպասելիքները չարգարացան, խուտովանում եմ. զրանից բան չի դուրս դայ:

— Է՛, ասի՛ր իրան:

— Էքուց առաւօտ կը յայտնեմ, թէ աւելորդ է այլևս: Այս գիշերն էլ թող մնայ բանտում: Ինքը

հէնց կարգադրիւր էքուց : Չէի կարող երեւակայել , որ այդքան յիմարը կը լինի : Գիմնադիւայում եղած ժամանակ՝ աչքիս աւելի խելօք էր երևում :

VII

Վառուշը նստեց իր թախտին : Չեռնունայն , զարկուած , յոյսերը քամուն տուած : Չկարողացաւ ծածկել տխրութիւնը . և չուզեց էլ ծածկել : Մոլար , բեկուած , վշտով լի հայեացքը ձգել էր յատակին :

— Եկա՛ւ , — մէկը ձայն տուեց կամէրայում տիրող թանձր աղջամուղջից (ճրագները դեռ ևս չէին վառել) :

Հսեց , հասկացաւ , որ իրա հասցէին էր այդ խօսքը : Եւ խորհեց , թէ «եկաւ»ին յաջորդելու է մէկ ուրիշ բան՝ «լրտեսը» : «Եկա՛ւ լրտեսը» . . .

Հայեացքը շարունակ յատակին , ցաւագին շարժումով՝ ձեռքերը հպեց ականջներին , որ չլսի՛ , չլսի՛ . . .

— Հը՞ , գլուխնե՞րդ է ցաւում , օրիորդ , — մօտեցաւ բանտապետի օգնականը , որ եկել էր կամէրան՝ իրիկուան թէյի բաժանմանը ներկայ գտնուելու համար . — ի՞նչ դարդ կարող էք ունենալ , որ այդպէս ընկել էք ժաքերի ծովը : Թէյներդ առէք , օրիորդ :

Վառուշը նոր միայն գլուխը բարձրացրեց , ասես նիրհած էր եղել՝ աչքերը պղտոր :

Հրաժարուեց վերստին , ինչպէս որ առաւօտն էր հրաժարուել :

— Ինչո՞ւ չէք ուզում , — նկատեց բանտապետը , — մանանա՞ ք անուշ արեւ սուրը հողու զօրութեամբ , որ կուշտ էք այդքան :

— Թողէ՛ք . . . — աղաչեց Վառուշը , — ոչինչ չեմ ուզում . . . ի սէ՛ր Աստծոյ , ինձ հանգիստ թողէ՛ք :

\* \* \*

Ընթրիքնին վերջացրած , բանտարկեալները , կին ու տղամարդ , խոնուել էին կամէրաները միացնող դըրան չէմքին : Խօսում էին անհանգիստ և բոլորի ղէմքերին՝ տրտմութիւն : Բանտապետի օգնականը արդէն լուր էր տուել՝ ժամկոչեանի վերաբերմամբ կայացուած մահավճարի մասին :

Վառուշի սիրտը զարկում էր արագ , անկանոն : Նա դեռ չէր իմանում , որ վճիռն այժմ յայտնի է կամէրայում բոլորին , կարծում էր , թէ միայն ինքն է իմանում , քանի որ իրան էր ընկ . Օվին յայտնել . . . Եւ մի տարօրինակ , սուր հեւք ու թրթիռ՝ շարունակ մղում . զրդում էին , մղում ու գրդում թէ —

«Մի՛ ուշացնի . . . իմացրու գրանց էլ . . . մօտեցիր , մօտեցիր ու նրանց յայտնիր : Այդ չէկին՝ Գարբինեանին յայտնիր . . . ասա՛ անպատճառ . . . ասա՛ անպատճառ . . . ասա՛ , ասա՛» :

Եւ այդ մղումների յորձանքն ինկած , ելաւ ուղիղ Աննա Գարբինեանի կողմը քայլեց , որ չէմքից ասդին անցած , երեք-չորս ուրիշների հետ , ծխում էր լուռ ու տխուր : Խօսեց շշնջալից .

— Չեզ ասելիք ունեմ . . . մի՛ մերժէք . . . առանձին ասեմ :

Շէկը թերահաւատօրէն ու ատելութեամբ նայեց չէնք-չնորհքին . . . և չարժուեց տեղից :

Սակայն , Վառուշը , յուսահատ ու յամատ , մտիկ արեց այնպիսի՝ ազդու աղաչական աչքերով (չըրթունքներն էլ ցնցուեցին) — որ Աննան մրթմրթաց իր ընկերներին գտնաւորով :

— Տեսնենք , ի՛նչ է ասում այս գարշելի արարածը :

Երբ մի կողմ քաշուեցին՝

— Չգուշացրէ՛ք ձեր ընկերոջ,— փսիսաց Վա-  
սուշը հեիհե, անհանգիստ, ջերմագին, — ձեր Երուստիգ  
Ժամկոչեանին, զգուշացրէ՛ք, թող փախչի անյապաղ...  
փախցրէ՛ք, ի սէրն Աստուծոյ, փախցրէ՛ք այս գիշեր...

Աչքերը արցունքով լցուեցին:

Դարբինեանը նորէն խէթ-խէթ չափեց նրան  
տախտի գլուխ: Թոյն կար աչքերի մէջ:

— Շատ շնորհակալ եմ ձեր բարի խորհրդի հա-  
մար, — արտասանեց սպաննիչ սառնութեամբ, — մի-  
այն շատ էլ լաւ եմ իմանում, թէ ի՛նչ օձի ձագն ես  
դու: Անզգամ, լի՛րբ:

Ու շուտ եկաւ՝ գնաց նորէն իր ընկերները մօտ:

\* \*

Ուշ գիշերին բանտի միջանցքում խուլ աղմուկ  
բարձրացաւ: Դռներ բացին, գոցեցին:

...«Տարա՛ն» — ինքն իրան շնչաց Վասուշը,  
որ մնացել էր արթուն: Եւ կծկուեց, խեղճացաւ չոր  
թախտին մեկնուած:

Կալանատուրուհիներից մի քանիսը, դարձեալ  
անքուն կեցած, հասկացան նոյնպէս, թէ ինչու՛ էին  
դռները բացուել ու խփուել...

— Ընկերներ՛ր, — բաւական բարձր լսուեց մի  
ձայն, — Ժամկոչին դուրս հանեցին:

Կամէրան շարժուեց: Ափսոսանքի ու ցաւի բա-  
ցականչութիւններ ու հառաչանքներ տարածուեցին  
թախտից թախտ:

Յետոյ, միևնոյն ձայնը խօսեց նորէն.

— Սակայն, մի՛ տխրէ՛ք, ընկերներ: Մեր ժամ-  
կոչը մեռնում է մեր դժբախտ երկրի ազատութեան

սուրբ գործի համար: Եւ կը գայ այդ ազատութիւնը,  
կը կործանի՛ բոլոր արիւնարբու բռնակալներին, բո-  
լոր գարչելի՛ մատնիչներին, լրտեսներին...

Կամէրայում տիրեց լուռութիւն:

\* \*

Դրսից խուլ կերպով, ասես գետնի տակից ելած,  
որոտ լսուեց: Հրացանների որոտ էր:

Կամէրայում շարունակուող՝ քար կտրած լուռ-  
եան մէջ՝ յանկարծ փղձկալով՝ մէկը բուռն հեկեկաց:  
— Սսս՛... սս՛... — սաստեցին այս ու այն  
կողմից:

Բայց բնաւ չըղնատուեց, չմեղմացաւ այդ լացը:

— Սսս՛... ո՞վ է այդ...

Եւ նայեցին, տեսան՝

Հեկեկողը Վասուշն էր:

\* \*

Առաւօտ կանուխ Վասուշը կանչուեց ընկ. Դա-  
բոյի մօտ:

Կայանաւորները, գիշերուան գնդակահարու-  
թիւնից աւելի զազազած, հայհոյանքներով  
ճամբեցին նրան...

— Այսօրուանից Դուք ազատ էք, — յայտա-  
րարեց քարտուղարը՝ ցուրտ ձայնով, — որովհետեւ չըկա-  
րողացաք արդարացնել այն վստահութիւնը, որ ընկ.  
Օվին թիւրիմացօրէն ունեցել էր դէպի ձեզ: Կարող էք  
գնալ:

— Ո՛ւր... — Խնքուն, տանջուած, յուսահատ  
ուժասպառ, գրեթէ անզիտակից վիճակում՝ հարցրեց  
աղջիկը:

— Ո՛ւր ինքներեդ կամենաք: Դա արդէն մեզ  
չի վերաբերում:

17748

\*  
\*\*

Տուն գնաց: Պատաւ մօր գիրկն ընկաւ ու սկսեց  
վերստին լալ, լալ, ինչպէս որ գիշերը բանտում:

— Սո՛ւս, բալա ջան, է՛լ ինչո՞ւ ես լաց լինում,  
քեզ բաց են թողել հօ... սո՛ւս:

Ուզում էր աղջիկը խօսել, ասել, բացատրել:  
Բայց հեկեկանքը կաշկանդել էր լեզուն:

Օգոստ. 1927 թ.           ՎԻՐՋ  
Զահլէ (Լիբանան)



2013

ԳԻՆ՝ 4 ՖՐԱՆՔ